

Թողարկման վերջնական պայմաններ

05.04.2021թ.

Ամերիաբանկ ՓԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել Ծրագրային ազդագիրը (գրանցված է 19 մարտ 2021թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ-ում 2 Վ. Սարգսյան փողոց, 0010, Երևան, ՀՀ հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավորող:
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	Սերիա 2, 2021
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ Տվյալ տեղաբաշխման ժամանակահատվածում չտեղաբաշխված պարտատոմսերը կարող են տեղաբաշխվել թողարկման վերաբազման միջոցով
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Պարտատոմսերը ստորադաս չեն: Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարման հերթականության մասին տեղեկատվությունը մանրակրկիտ ներկայացված է Ծրագրային ազդագրի 3.3.6 մասում/կետում: Ծրագրային ազդագրին կարելի է ծանոթանալ «Ամերիբանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում www.ameriabank.am
6.	Թողարկման արժույթը	ՀՀ դրամ
7.	Առաջարկի գինը	Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

		<p>տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝</p> $DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ <p>որտեղ՝</p> $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>DP - Պարտատոմսի գինն է, DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում, f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (4- եռամսյակային վճարումների համար), N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը, C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց, Y - մինչև մարում եկամտաբերություն:</p> <p>Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր օրվա համար հրապարակվում է Թողարկողի կայքում</p>
8.	Անվանական արժեքը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
9.	Քանակը	50,000 (հիսուն հազար) հատ
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	2021թ. ապրիլ 12
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	2021թ. հունիս 22 Ընդ որում, եթե պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչ այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է հանդիսանում այն օրը, երբ վաճառվել է վերջին պարտատոմսը:
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	AMAMRBBM2ER1
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը	«Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի 2021թ. փետրվարի 5-ի թիվ 01-

	(լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	1/21/01 որոշում և «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրինության 2021թ. ապրիլի 5-ի թիվ 01/44/21 որոշման
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	2021թ. ապրիլի 12
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	9.5% (ինն ամբողջ հինգ տասնորդական տոկոս) անվանական տոկոսադրույք և 3 (երեք) ամիս վճարման պարբերականությամբ
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	12.07.2021 12.10.2021 12.01.2022 12.04.2022 12.07.2022 12.10.2022 12.01.2023 12.04.2023 12.07.2023 12.10.2023 Արժեկտրոնի վճարումները կատարվում են արժեկտրոնի վճարման օրերին բացառությամբ այն դեպքերի, երբ արժեկտրոնի վճարման օրը ոչ աշխատանքային օր է. նման դեպքում արժեկտրոնը վճարվում է արժեկտրոնի վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	ոչ կիրառելի
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Վճարվող արժեկտրոնի մեծությունը որոշվում է տարեկան արժեկտրոնի մեծությունը բաժանելով տարվա ընթացքում արժեկտրոնների վճարման հաճախականության վրա:
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման ժամկետը	2023թ. հոկտեմբերի 12 Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը: Եթե


		մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:
22.	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	4) Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փոթ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ 2 Վ. Սարգսյան փողոց, 0010, Երևան, ՀՀ
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	
Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրի
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, ընդ որում առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել: Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

		Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի “Հայաստանի ֆոնդային բորսա” ԲԲ ընկերությունը:
30.	<u>Արժեթղթի վարկանիշը</u>	Արժեթղթերը վարկանշված չեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	<p>Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք վճարումը կատարում են թողարկման նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված 1570043120372900 հատուկ հաշվեհամարին:</p> <p>Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի ներկայացման հիմքով, ոչ ուշ քան պարտատոմսերի ձեռքբերման օրվա 16:30-ը: Եթե համապատասխան գումարները վճարվում են պարտատոմսերի ձեռքբերման օրը 16:30-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը: Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից:</p>

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Արտակ Հանեսյան (անուն, ազգանուն)	Տնօրինության նախագահ, Գլխավոր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	06.04.21 (ամսաթիվ)
Գևորգ Թառումյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ, ֆինանսական գծով տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	06.04.21 (ամսաթիվ)
Գագիկ Սահակյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	06.04.21 (ամսաթիվ)
Անդրանիկ Բարսեղյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	06.04.21 (ամսաթիվ)
Արման Բարսեղյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Մանրածախ բանկինգի տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	06.04.21 (ամսաթիվ)
Արմինե Ղազարյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	06.04.21 (ամսաթիվ)
Գոհար Խաչատրյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	 (ստորագրություն)	06.04.21 (ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

Արտակ Հանեսյան (անուն, ազգանուն)	Տնօրինության նախագահ - գլխավոր տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	06.04.21 (ամսաթիվ)
--	--	---	-----------------------

